## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Փամբակ, +374 98393131, info@pambak.am

# Ո Ր Ո Շ Ու Մ

16 ՄԱՅԻՍԻ 2024թվականի N 064-Ա

## ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ԿԻՑ ԿԱՆԱՆՑ ԵՎ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԱԿՑԱԿԱՆ ՄԱՐՄՆԻՆ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 7-րդ կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնքի ղեկավարի և ղեկավարին կից կանանց և երիտասարդության հարցերով խորհրդակցական մարմնի անդամ, ԿԵԽՄ-ի կողմից իրականացվող «Զարդանախշերի երկխոսություն» ծրագրի կոորդինատոր Համմիկ Մացակյանի միջև կնքված պայմանագիրը և համայնքի ղեկավարի առաջարկությունը, Փամբակ համայնքի ավագանին՝ ***որոշում է.***

1. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնքի ղեկավարին կից կանանց և երիտասարդության հարցերով խորհրդակցական մարմնի կողմից՝ ՄԱԿ-ի զարգացման ծրագրի շրջանակում իրականացվող «Զարդանախշերի երկխոսություն» դրամաշնորհային ծրագիրն իրականացնելու համար համայնքի բյուջեից տրամադրել 800000 /ութ հարյուր հազար/ ՀՀ դրամ, որից՝

1) Բաժին 01. խումբ 01. դաս 01, հոդված 4212-ով 175000 դրամ փոխանցել, որպես էլեկտրաէներգիայի եռաֆազ աբոնենտի հզորացման և արևային հաշվիչի տեղադրման ծախս:

2) Բաժին 08. խումբ 02. դաս 04, հոդված 4639-ով 625000 դրամ փոխանցել, որպես դրամաշնորհ:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ -13 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՆԱՆՅԱՆ ՍԱՄՎԵԼ
ԱՆՏԻՆՅԱՆ ԱՇՈՏ
ԲՈՋՈՒԿՅԱՆ ԹԻԱՆԱ
ԳԱՍՊԱՐՅԱՆ ԷՄՄԱ
ԽԱՉԱՏՐՅԱՆ ՍԵՎԱԿ
ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԳՐԻԳՈՐ
ԿՈՍՏԱՆԴՅԱՆ ՍՈՒՐԵՆ
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՆԱԻՐԱ
ՄԱՐԱՆԴՅԱՆ ՍԱՍՈՒՆ
ՈՍԿԱՆՅԱՆ ԱՐՄԵՆՈՒՀԻ
ՍԱՐԴԱՐՅԱՆ ՍԵՐՅՈԺԱ
ՍՐԱՊՅԱՆ ԱՐՇԱԿ
ՔՈՉԱՐՅԱՆ ԱՐԱՅԻԿ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ժ/Պ՝** **ՍԱՄՎԵԼ ԱՆԱՆՅԱՆ**